«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ինչպես կազմակերպել հետազոտական աշխատանքներ տարրական դպրոցում
ԱՌԱՐԿԱ	Ես և շրջակա աշխարհը
ՀԵՂԻՆԱԿ	Աշխեն Բեյբության
ՄԱՐԶ	Արմանիր
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Վաղարշապատի Խ.Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ինչպես կազմակերպել հետազոտական աշխատանքներ տարրական դպրոցում

Երեխային պետք է այնպես սովորեցնել , որ նրա մեջ ինքնակրթությամբ զբաղվելու ցանկություն առաջանա: Նրան պետք է այնպես դաստիարակել, որ նրա մեջ ինքնադաստիարակման նկատմամբ ձգտում առաջանա:

(Սուխոմլիսկի)

Ուսումն ավելի կայուն է դառնում և բարելավվում է այն ժամանակ, երբ սովորողները անդրադառնում են ուսմանփորձին և նրանց համար դա իմաստ է ունենում: Նրանք սկսում են ավելի բարձր գնահատել իրենց ուսումն այն ժամանակ, երբ սկսում են մտածել այն մասին, թե ինչ են նրանք սովորում, ինչպես են նրանք սովորում և ինչ այլ բան պետք է իմանան: Նորագույն կրթության հայելին ինքնակառավարվող սովորողն է: Նա, ով ընթանում է ինքնակրթության ճանապարհով, ունի հստակ սահմանված տեսլական և նոր գիտելիքներ ձեռքբերելու անհագ ցանկություն: Նման սովորողը չի ընկրկում դժվարության առաջ, հավատում է իր ուժերին և հնարավորություններին:

Ինքնակառավարվող սովորող դաստիարակելու համար կարևոր է ժամանակին տեսնել, դիտարկել երեխայի ունակությունները և հիմք նախապատրաստել նրա ստեղծագործական ունակությունների իրագործման համար: Ահա թե ինչու շատ կարևոր է, որ դպրոցական ուսումնառության հենց առաջին օրերից սկսած երեխան



դառնա ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցը:

Անհրաժեշտ է առաջին դասարանից սովորողներին վարժեցնել հետազոտական գործունեության հետևյալ ձևերին:

- Մտածել ինքնուրույն
- Կարդալ գրքերում
- Փորձեր անցկացնել
- Հարցնել մեկ ուրիշից

Հետազոտական աշխատանքների նկատմամբ պահանջմունքը պայմանավորված է երեխայի բնույթով: Չէ՞որ երեխան ի ծնե հետազոտող է: Հետազոտությունների նկատմամբ հակում ունեն բացառապես բոլոր երեխաները: Նոր տպավորությունների անհագ ծարավը, հետաքրքրասիրությունը, փորձ անելու և ճշմարտությունն ինքնուրույն բացահայտելու մշտական ձգտումը հատուկ է վառ երևակայությամբ օժտված և էներգիայով լեցուն երեխաներին: Ուստի ուսուցչից պահանջվում է այդ էներգիան ուղղորդել երեխաների այդ մեծ նպատակի իրականացմանը:

Հետազոտական գործունեությունն անձի ակտիվ ստեղծագործական վերաբերմունքն է շրջապատող աշխարհի նկատմամբ, որն արտահայտվում է պատրաստակամությամբ, աշխարհի ճանաչմանը նպաստող գործնական կարողություններով, զանազան, երբեմն էլ անսպասելի, ոչ կանխատեսված

հետազոտական արդյունքների ստացմամբ և հետագա ճանաչողական գործընթացում դրանց կիրառմամբ: Երեխան սովորում է դիտարկել, խորհել, համեմատել, կատարել եզրահանգումներ, պատասխանել հարցերին և այլն: Հետազոտական գործունեության արդյունքը ոչ միայն գիտելիքներն են, որոնք նա ձեռք է բերում, այլև ճանաչողական գործունեություն ծավալելու միջոցները, որոնք նպաստում են անձի մտավոր զարգացմանը: Հետազոտության խնդիրներն անպայման պետք է համապատասխանեն տարիքին և գտնվեն սովորողների մերձակա զարգացման գոտում, քանի որ հետաքրքրությունը աշխատանքի նկատմամբ և մատչելիությունը որոշում են աշխատանքի ընթացքը: Տարրական դասարաններում համարյա բոլոր հետազոտական աշխատանքները կրում են կոլեկտիվ բնույթ: Այն սովորեցնում է աշակերտներին աշխատել կոլեկտիվում և ընհանուր հետաքրքրությունները վերդասել սեփականից: Հետազոտական գործունեության ընթացքում լուծվում է հետևյալ կարողությունների զարգացման խնդիրը:

- Ճանաչողական կարողություն
- Տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու կարողություն
- Գիտելիքներն ինքնուրույն կիրառելու կարողություն

Հետաքննության վրա հիմնված ուսումնառության փուլերն են՝

- Պլանավորում
- Որոնում
- Մշակում
- Ներկայացում
- Գնահատում

Ստորև ներկայացնում եմ հետազոտական աշխատանքի իմ օրինակը:

Դասարան՝4_ րդ

Առարկա՝Ես և շրջկաաշխարհը

Թեմա՝Բնությունը տարվա տարբեր եղանակներին

Ենթաթեմա՝ Տարվա եղանակները

Չափորոշչով սահմանված նպատակներ

1 Գիտելիք _ Թեմայի ավարտին սովորողը կկարողանա թվարկել տարվա եղանակները և կիմանա, որ տարվա եղանակների փոփոխությամբ փոփոխվում է նաև բնությունը:

2. Հմտ/ կարող _ Թեմայի ավարտին սովորողը կկարողանա համեմատել տարվա եղանակները և նկարագրել տարվա յուրաքանչյուր եղանակին բնորոշ փոփոխությունները:

3 Արժևորում _ Կկարողանա արժևորել և կարևորել բնության դերը մարդու կյանքում:

Հետազոտական աշխ.նպատակները

Սովորողների մեջ՝

- հաղորդակցական , համագործակցային և ստեղծագործական հմտությունների զարգացում
- բնության հանդեպ պատասխանատու վարքագծի ձևավորում

Օգտագործվող ռեսուրսներ _ գրքեր , տեսանյութեր, տիտ գործիքներ, համացանց և այլն

Ինտեգրվող առարկաներ _ Մայրենի, Երաժշտություն , Կերպարվեստ, Տեխնոլոգիա

Աշխատանքի ձևը՝ համագործակցային

Գնահատման տեսակը՝ միավորային, ինքնագնահատման ռուբրիկներ

Ուսուցչի ռազմավարություններ

- Սովորողներին տրամադրել իրենց հետազոտական աշխատանքի և գործընթացի գնահատմանը վերաբերող չափանիշներ:
- Ուղղորդել սովորողներին և ցույց տալ նրանց համապատասխան տեղեկատվությունը որոնելու ճիշտ ռազմավարություններ:
- Ուղղորդել սովորողներին և ցույց տալ նրանց թե ինչպես կարելի է համեմատել, հակադրել և սինթեզել տեղեկատվությունը, նաև օգտագործել ճիշտ ռեսուրսներ:
- Խրախուսել և ոգևորել սովորողներին, ստեղծել արդյունավետ պայմաններ աշխատանքի համար:
- Սովորողներին տրամադրել ինքնագնահատման ռուբրիկներ՝ գնահատելու իրենց աշխատանքը և ընթացքը: Ռուբրիկները սովորողներին պետք է ներկայացնել և բացատրել նախքան հետազոտական գործընթացն իրականացնելը, որպեսզի երեխաները հստակ գիտակցեն իրենցից ակնկալվող արդյունքը:

Փուլ 1 Պլանավորում

Աշակերտների հետ անցկացնել նախնական զրույց, որի նպատակն է երեխաներին տալ որոշակի ցուցումներ, ներկայացնել առաջադրանքը, օգնել մշակել գործողությունների պլան: Այս փուլում հստակեցվում է յուրաքանչյուր խմբի թեման: Խմբի ներսում դերերի, պարտականությունների բաշխում է կատարվում:

Քայլ 1 Հետազոտական աշխատանքն իրականացնելու համար ձևավորվում են հետևյալ խմբերը

1 խումբ _ Գարուն

2 խումբ _ Ամառ

3 խումբ _ Աշուն

4 խումբ _ Ձմեռ

Խմբերը պետք է ուսումնասիրեն և տեղեկություններ հավաքեն տվյալ եղանակի մասին: Ներկայացնեն տրված եղանակը արվեստի ստեղծագործություններում՝ կտավներ, գրական երկեր և այլն: Պետք է ներկայացնեն նաև տվյալ եղանակին նշվող տոները:

Քայլ 2 Գրատախտակին փակցնել մեծ պաստառ, որի վրա պատկերված կլինեն տարվա եղանակները և հարց ու պատասխանի միջոցով կազմակերպել մտագրոհ: Այն հնարավորություն կտա պատկերացում կազմել թեմայի վերաբերյալ սովորողների իմացության և պատկերացումների մասին:

Օրինակ՝

Ո՞ր եղանակն է պատկերված նկարում, ինչ՞ու ես այդպես կարծում:

- Տարվա ընթացքում ինչպիսի՞ փոփոխություններ են լինում:
- Ո՞րն է տարվա ամենատաք եղանակը:
- Գարնանն ինչպիսի՞ փոփոխություն է կրում բուսականությունը:

Քայլ 3 Ցուցադրել տեսնյութ, որտեղ սովորողները մատչելի ձևով կծանոթանան տարվա եղանակներին և կիմանան, որ դրա գլխավոր պատճառն այն է, որ Երկիր մոլորակը պտտվում է Արեգակի շուրջ:

Փուլ 2 Որոնում

Քայլ 4 Կազմակերպել էքսկուրսիա բնության գիրկ (դիտել , գրառումներ կատարել, լուսանկարել՝ հնարավորության դեպքում): Այն ունի դաստիարակչական նշանակություն և հնարավորություն կտա սովորողներին ընդլայնել գիտելիքները:

Դիտարկումները կնպաստեն սովորողների պատկերային, տրամաբանական մտածողությանը և տեսածը բանավոր վերարտադրելու կարողությանը:

Քայլ 5 Այցելություն պատկերասրահներ՝ տարվա եղանակները պատկերող կտավներ ուսումնասիրելու և քննարկելու համար:

Քայլ6. Այցելել գրադարան, գրադարանավարի օգնությամբ ընտրել համապատասխան գրականություն:

Քայլ7 Երաժշտության ուսուցչուհու օգնությամբ փնտրել համապատասխան երաժշտական կատարումներ և ունկնդրել երաժշտության դասաժամին:

Քայլ 8 Այցելել Բնության թանգարան:

Քայլ 9 Հանդիպում բնապահպանի հետ:

Քայլ 10 Սովորողին տրամադրել ժամանակ և հանձնարարել հավաքել լրացուցիչ տեղեկություններ թեմայի վերաբերյալ, որը հնարավորություն կտա ինքնուրույն ուսումնասիրել և ձեռք բերել նոր գիտելիքներ:

Համապատասխան տեղեկատվություն փնտրելու համար սովորողներ ըպետք է կարողանան պատասխանել հետևյալ հարցերին:

- Ի՞նչ տեղեկություն է պետք:
- Որտե՞ղ կարող ենք գտնել այդ տեղեկությունը:
- Ինչպե՞ս կապ հաստատենք մեզ անհրաժեշտ մարդկանց հետ:
- Ինչպե՞ս հարցազրույց վարենք:

Այս փուլում ուսուցիչը սովորողին սովորեցնում է որոնման արդյունավետ ռազմավարություններ:

Փուլ 3 Տեղեկատվության մշակման փուլ

Տեղեկատվության մշակման փուլը բավականին լուրջ և աշխատատար պրոցես է: Հավաքագրված բազմաթիվ և բազմաբնույթ տեղեկատվությունները կարող են սովորողների մոտ հուզական ապրումներ ստեղծել: Ուսուցիչը պետք է ուղղորդի սովորողներին, ցույց տա , թե ինչպես կարող են համադրել, համեմատել , սինթեզել տեղեկատվությունը: Կարևոր է նաև այն , որ աշխատանքն ընթանա ջերմ մթնոլորտում, որտեղ յուրաքանչյուր սովորող կզգա իր կարևորությունը: Համատեղ աշխատանքի, քննարկումների արդյունքում սովորողներն առանձնացնում են կարևոր տեղեկատվությունը , խմբավորում դրանք (զարգանում է երեխաների քննադատական և վերլուծական մտածողությունը):

Փուլ 4 Արդյունքների ներկայացման փուլ (Տարաբնույթ ձևերով արդյունքների ներկայացում):

Այս դեպքում աշակերտները հետազոտական ուսումնասիրության արդյունքները որոշեցին ներկայացնել դաս միջոցառման տեսքով՝ օգտվելով նաև « Շրջայց պատկերասրահում» մեթոդից (երեխաները սովորում են հիմնավորված շարադրել իրենց մտքերը):

Փուլ 5 Գնահատում

Գնահատման ընթացքում հաշվի է առնվում բովանդակությունը, գեղարվեստական ձևավորումը, ստեղծագործական մոտեցումը, սովորողի ներդրման չափը խմբային գործունեության ընթացքում:

Չափանիշներ	Գերազանց	Լավ	Բավարար
Հետազոտության կատարում	Անցկացված հետազոտությունը տարբերվում է իր խորությամբ, ստեղծագործական մոտեցմամբ:	Անցկացված է խորությամբ, բայց չի ցուցաբերել ստեղծագործական մոտեցում:	Հետազոտությունը անցկացվել է մակերեսորեն: Չի ցուցաբերել ինքնուրույնություն, ստեղծագործական մոտեցում:
Տեղեկատվական աղբյուրների քանակը	Ընտրված են մեծ քանակությամբ ճշգրիտ տեղեկատվության աղբյուրներ:	Օգտվելէ 1_2 տեղեկատվական աղբյուրներից, բացակայում է մեջբերումները:	Տեղեկատվական աղբյուրների քանակը բավարար չ է,1 տեղեկ.աղբյուրից, որը բավական չէ թեման ամբողջությամբ բացահայտելու համար:
Թիմային, համագործակցային	Ճշգրիտ պլանավորված է	Համատեղ գործողությունները	Չկա համակարգված

աշխատանքը	համատեղ գործողությունները: Քննարկումներին մասնակցել են բոլոր աշակերտները:	պլանավորված են, բայց կան որոշակի թերացումներ: Ոչ բոլոր մասնակիցներն են ակտիվ մասնակցել քննարկմանը:	աշխատանք: Խմբի ոչ բոլոր անդամներն են մասնակցել քննարկմանը:
Նպատակների և աշխատանքի արդյունքների համապատասխանությունը	Կատարված հետազոտությունը պատասխանում է նպատակներում ձևակերպված հարցերին:	Հիմնականում պատասխանում է նպատակներում ձևակերպված հարցերին, բայց ներկայացված է ոչ համակարգված:	Կատարված հետազոտությունը աննշան կերպով է պատասխանում նպատակներում ձևակերպված հարցերին:
Պրոդուկտը ներկայացնելու հմտությունները	Խոսքը պարզ է և հասկանալի, օգտագործում է աչքերի կոնտակտը հանդիսատեսին ներգրավելու համար:	Խոսքը պարզէ, սակայն կա որոշակի կաշկանդվածություն:	Ձայնը լսելի չէ, չի կարողանում գրավել հանդիսատեսին:

Ինքնագնահատման ռուբրիկ

	Գրեթե միշտ 3	Երբեմն 2	Հազվադեպ 1
Մասնակցել եմ քննարկումներին			
Ձգալի աշխատանք եմ կատարել			
Գովել եմ թիմակիցներիս ջանքերը			

Դիմել եմ փոխզիջման և ջանք թափել հանդուրժող լինելու համար			
Փոխանակել եմ մտքերս			
Մյուսներին ներգրավել եմ քննարկման մեջ			
Ներկայացել եմ անհրաժեշտ նյութերով			

Օգտագործված գրականության ցանկ

1. «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես
2. «Գործնական աշխատանքներ մայրենիից», ԿարինեԹորոսյան, Կարինե Չիբուխչյան, Ե.2012

https://youtu.be/KTzthSmpZbU

https://youtu.be/YM6nMQbcKEk

https://youtu.be/k4leR3o5-ro

https://wordwall.net/ru/resource/23309976

https://learningapps.org/view21676070